Արձանագրություն N 2

2023-2024 թվականների առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» «Մարտի» 2023թ.
ժամը 15:00

Բացման նիստին մասնակցել են՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Խուրշուդյան
Հանձնաժողովի անդամներ	Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Խուրշուդյան)

Ընդունել ի գիտություն, որ 22.02.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի մարտի 7-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի մարտի 9-ին ժամը 11:00-ին: 2023 թվականի մարտի 10-ին ժամը 15:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Մի Վնասիր» ՍՊԸ	mivnasir.llc@gmail.com	01847238

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Խուրշուդյան)

Առաջին տեղը զբաղեցրած միակ մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը և հավելված 1.2-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, «Մի Վնասիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը, ուստի հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները վերջինիս կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

4. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Հ. Խուրշուդյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի «Մի Վնասիր» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս արձանագրվել է, որ վերջինիս հայտում բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը և կայացվել է որոշում վերջինիս հայտը մերժելու, ուստի ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/21» ծածկագրով գնման ընթացակարգի համար արգործության ժամկետ սահմանել 15.03.2023թ-ից մինչև 24.03.2023թ.-ը ներառյալ ժամանակահատվածը:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Խուրշուդյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան